ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ ԿԿՆՔԻ ‘ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ’ ՀԵՏ

19.02.2015 15:39

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը այսօր՝ փետրվարի 19-ին ընդունել է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ‘Փորձաքննությունների ազգային բյուրո’ ՊՈԱԿ-ի տնօրեն Արտաշես Ջավադյանին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են երկու կառույցների միջև փոխըմբռնման և համագործակցության հուշագրի կնքման հնարավորությունը: Թե՛ փաստաբանների պալատի և թե՛ ‘Փորձաքննությունների ազգային բյուրոյի’ ներկայացուցիչները հույս են հայտնել՝ համատեղ ջանքերով իրականացնել այնպիսի ծրագրեր, որոնք հնարավորություն կտան փաստաբաններին և բյուրոյին որակապես նոր մակարդակի վրա բարձրացնել քաղաքացու պաշտպանությունը դատական ատյաններում, ինչպես նաև նեղ մասնագիտական փորձաքննությունների մասին կիրազեկեն փաստաբաններին:

Միաժամանակ ‘Փորձաքննությունների ազգային բյուրոն’ ՀՀ փաստաբանների պալատին կներկայացնի այն բոլոր փորձաքննությունների տեսակները (ենթատեսակները), որոնցով փաստաբանները կարող են ինքնուրույն դիմել և փորձաքննություն պատվիրել:

Հանդիպմանը ներկա Փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանի հետ էլ քննարկվել են Փաստաբանական դպրոցում Ազգային Բյուրոյի բարձրակարգ մասնագետների դասախոսություններ կարդալու հնարավորությունը: Կողմերը պայմանավորվել են ակտիվ աշխատել այդ ուղղությամբ և կարճ ժամանակում համագործակցության առաջին քայլերը կատարել:

Որպես նախնական փուլ Փաստաբանական դպրոցի ունկնդիրների համար շրջայց կկազմակերպվի Փորձաքննությունների ազգային բյուրոյում, որպեսզի ծանոթանան վերջինիս հնարավորություններին:

Հանդիպման ավարտին Արտաշես Ջավադյանը շրջայց է կատարել Պալատում՝ եղել է Փաստաբանական դպրոցում և Հանրային պաշտպանի գրասենյակում:

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })